



«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական  
կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝

Կերպարվետի պարապունքի պլանավորումը միջին խմբում

Դաստիարակ՝ Կարինե Գաբրիելյան

Մանկապարտեզ՝ « 101 » ՀՈԱԿ

2023թ.

## Բովանդակություն

Ներածություն .....	3
Տեսական մաս.....	4
Հեղինակների մեջբերումներ .....	11
Գլուխ առաջին .....	12
Օրինակելի պարապմունք .....	13
Եզրակացություն.....	16
Գրականության ցանկ.....	17

## Ներածություն

Միջին խմբի տարիքային առանձնահատկությունը հնարավորություն է տալիս արդյունավետ կազմակերպել կերպարվեստային գործունեության ցանկացած տեսակ: Այս տարիքային խմբի երեխաները կարող են հեշտությամբ և ակտիվորեն շրվել, հաղորդակցվել, ներգրավվել խաղի մեջ, հրապուրվել հորինած կերպարներով, տեսնել կենցաղում, բնության մեջ հանդիպող, արվեստում վերարտադրված առարկաների գեղարվեստական արտահայտչականությունը, դրանց բնորոշ հատկությունները, առանձին մասերը, ձևը, ուրվագիծը, գույները, նախշերը: Այս խմբի երեխաներին հատուկ է՝ մեծ ոգևորությամբ զննել և ուսումնասիրել այն նմուշը, որն առաջարկվում է նկարել կամ ծեփել: Նրանք սովորում են թղթով, գործվածքով, բնական նյութերով, պլաստիլինով, կավով, խմորով, գունաներկերով տարբեր աշխատանքներ կատարելու ձևերն ու եղանակները: Նախադպրոցական տարիքի երեխաները հաճախ իրենց նախաձեռնությամբ ինտեգրում են կերպարվեստային գործունեության տեսակները: Նախադպրոցականի համար նկարչությունը նույնքան բնական պահանջմունք է, որքան խաղը: Կերպարվեստը ոչ միայն փոքրիկի զգացմունքի արտահայտումն է այլև միջոց ճանաչելու շրջապատը: Միաժամանակ կերպարվեստը կատարում է նաև զարգացնող դեր հարստացնելով և ճշգրտելով երեխաների աշխարհաընկալումը: Միջին խմբում ևս կերպարվեստը կարելի է դիտել որպես ինքնատիպ խաղ: Դա է պատճառը, որ սովորեցնելով երեխային նկարել, չպետք է նրան զրկել ինքնուրույնությունից, այլ նպաստել ազատ ու ստեղծագործ աշխարհաընկալման ձևավորմանը: Կերպարվեստի բուն գործընթացը, ինչը թղթի վրա պատկերելու միջոցով, երեխայի սիրտ, հակումների, հույզերի ու տրամադրության արտացոլումն է, երեխային ձերբագատում է լարվածությունից և հանդարտություն պարգևում:

## Տեսական մաս

Նախադպրոցական տարիքում գեղագիտական դաստիարակության առանձնահատկություններից մեկը կապված է երեխայի ճանաչողական գործընթացների ոլորտում տեղի ունեցող փոփոխությունների հետ: Օրինակ՝ երեխաների մոտ գեղագիտական իդեալների ձևավորումը՝ որպես նրանց աշխարհայացքի մի մաս, բարդ և երկարատև գործընթաց է: Սա նշում են վերը նշված բոլոր մանկավարժներն ու հոգեբանները: Կրթության ընթացքում փոփոխություններ են կրում կյանքի հարաբերությունները, իդեալները: Որոշակի պայմաններում, ընկերների, մեծերի, արվեստի գործերի, կյանքի ցնցումների ազդեցության տակ իդեալները կարող են հիմնարար փոփոխություններ կրել: «Երեխաների մոտ գեղագիտական իդեալների ձևավորման գործընթացի մանկավարժական էությունը, հաշվի առնելով նրանց տարիքային առանձնահատկությունները, կայանում է հասարակության, անձի, մարդկանց միջև փոխհարաբերությունների վերաբերյալ կայուն իմաստալից գաղափարների ձևավորումը հենց սկզբից, վաղ մանկությունից, անելու մասին: սա բազմազան է՝ փոխելով յուրաքանչյուր փուլ նոր և հետաքրքիր ձևով» :

Ժամանակակից պայմաններում մանկապարտեզներում առաջ են քաշվում գեղագիտական դաստիարակության հետևյալ խնդիրները

- Համակարգված զարգացնել երեխաների գեղեցկության ընկալումը, գեղագիտական զգացմունքները, պատկերացումները: Դրան նպաստում են բոլոր տեսակի արվեստը, բնությունը և առօրյան, առաջացնում են անմիջական հուզական արձագանք, ուրախություն, հուզմունք, հիացմունք, ոգևորություն:

- Երեխաներին ներգրավել արվեստի բնագավառի գործունեության մեջ՝ դաստիարակելով նրանց գեղեցկության տարրեր առօրյա կյանքում, բնության մեջ և սոցիալական հարաբերություններ մտցնելու անհրաժեշտության և սովորության մեջ:

- Երեխաների գեղագիտական ճաշակի ու կարողության հիմքը ինքնուրույն գնահատել արվեստի գործերը և կյանքի երևույթները.

- Զարգացնել երեխաների գեղարվեստական և ստեղծագործական կարողությունները:  
Նախադպրոցական տարիքում գեղագիտական դաստիարակության հիմնական խնդիրը իրականության նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքի ձևավորումն է:

Էսթետիկ ընկալման, գեղագիտական և գեղարվեստական ունակությունների, գեղագիտական և գեղարվեստական գործունեության զարգացումը հիմնված է զգայական համակարգերի ժամանակակից զարգացման, տարբեր անալիզատորների գործունեության վրա, որոնք ապահովում են անհրաժեշտ ճշգրտություն և տարբերակման ճշգրտություն:

Միջին նախադպրոցական երեխաների կերպարվեստային գործունեության ծրագրի հիմնական խնդիրներն են՝

1. Զարգացնել 4-5 տարեկան երեխաների գեղարվեստա-ստեղծագործական ունակությունները.
2. Երեխաների մեջ ամրապնդել և կատարելագործել կերպարվեստային գործունեության այբուբենը՝ գծանկարի, գունանկարի, ծեփակերտման, ապլիկացիայի, դեկորատիվ կիրառական աշխատանքի հիմունքներ.
3. Նկարչության ուսուցում բնօրինակից հիշողությամբ և երևակայությամբ, և դրա հիման վրա երեխաների տեսողական հիշողության տարրական պատկերացումների, ստեղծագործական երևակայության զարգացումը.
4. Երեխաների գեղագիտական ընկալման, գեղագիտական ճաշակի, իրականության երևույթների և առարկաների նկատմամբ հուզական-զգայական վերաբերմունքի զարգացումը և կատարելագործումը.
5. Երեխաների մեջ կերպարվեստի նկատմամբ սիրո և հետաքրքրության ձևավորմանը
6. Նպաստել երեխաների անհատականության զարգացմանը
7. Սովորեցնել երեխաներին՝ վերլուծել դաստիարակի կողմից կառուցած շինությունների նմուշները, առանձնացնել հիմնական մասերը (շենքերի, կամուրջների և այլն), սահմանե

այդ մասերի տարածական տեղադրությունը մեկը մյուսի հարաբերությամբ, շինության յուրաքանչյուր մասից առանձնացնել առանձին մասնիկներ (դետալներ)

Կերպարվեստի դասավանդման ընթացքում կիրառվող ակտիվ ուսուցման մեթոդներն են՝ «Մտագրոհի մեթոդ», «Բանալի եզրույթների մեթոդ», «Խմբավորման մեթոդ», «Կարուսելի մեթոդ», «Վեննի դիագրամի մեթոդ», «Բանավոր շրջանագծի մեթոդ»:

**ՄՏԱԳՐՈՂԻ ՄԵԹՈՂ-** Նախքան պարապմունքը սկսելը երեխաներին առաջարկվում է քննարկել այն,ինչ գիտեն տվյալ թեմայի վերաբերյալ,ապա դաստիարակը հերթականությամբ հարցնում է բոլոր երեխաներին,և նրանք պետք է ասեն այն ամենը,ինչ մտածում են:Այդ մեթոդի շնորհիվ երեխանրը ներկայացնում են իրենց գիտելիքները,հայտնում են կարծիքներ՝ լինի դա ճիշտ թե սխալ:

**ԲԱՆԱԼԻ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ՄԵԹՈՂ-** Պարապմունքը սկսելուց առաջ դաստիարակը ասում է տվյալ թեմային մոտ չորս բառեր և երեխաները ըստ այդ բառերի պետք է գուշակեն,թե ինչի մասին է իրենց պատմելու մանկավարժը: Օրինակ **Գարնան** մասինպարապմունքը սկսելուց առաջ դաստիարակը ասում է ,«Տարվա որ եղանակի հետ կապ ունեն-Ձնծաղիկը ,մայրիկների տոնը, հաճելի եղանակը, բողբոջած ծառերը բառերը և բառակապակցությունները: »

**ԽՄԲԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈՂ-** Խմբավորման մեթոդը նպատակահարմար է կիրառել երեխաների որոշ խմբի մեկ ընդհանուր գործի շուրջ համախմբելու համար:Այդ կերպ երեխաները ցուցաբերում են փոխօգնություն,մեկը մյուսին աջակցելու ցանկություն, հարգանք ընկերոջ գործի նկատմամբ,ձևավորվում է ուրիշի կարծիքը հաշվի առնելու գիտակցումը:Երեխաներին կարելի է խմբավորել հենց տվյալ պարապմունքի համար անհրաժեշտ դիդակտիկ պարագաներով,օրինակ «մրգերի» մասին պարապմունք վարելիս երեխաներին բաժանում են 4 խնձոր, 4 տանձ ,4 նարինջ ,4 արքայախնձոր և այլն,և այդ կերպ խմբավորում սեղանի շուրջ:

**ԿԱՐՈՒՄԵԼԻ ՄԵԹՈԴ** -Կարուելի մեթոդը կրկին ենթադրում է երեխաների համատեղ աշխատանք ,որի ընթացքում երեխաները համախմբվում են մեկ աշխատանք իրականացնելու համար:Նախապես խմբերի բաժանված երեխաների առաջին խումբը 5 րոպեում կատարում է առաջադրանքը ,որի վրա աշխատանքը շարունակում է մյուս խումբը կրկին 5 րոպե և այդպես շարունակ: Օրինակ ,հանձնարարված է նկարել գարուն. առաջին խումբը նկարում է ծառերը, մյուս խումբ՝ խոտերը , երրորդը՝ արև, վերջինն էլ ամպեր:

**ՎԵՆՆԻ ԴԻԳՐԱՄԻ ՄԵԹՈԴ**- Վեննի դիագրամը կազմվում է երկու շրջանագծով ,որոնք հատման որոշակի մակերես ունեն : Այդ շրջանագծերը օգտագործվում են երկու կերպարներ միմիանց հակադրելու, իսկ հատման մասը՝ դրանց ընդհանրությունները ընդգծելու համար :Օրինակ, շրջանագծի մի մասում երեխաները նկարում են գարուն մյուսում՝ աշուն ,իսկ դրանց հատման կետում՝ ընդհանրությունները:

**ԲԱՆԱՎՈՐ ՇՐՋԱՆԱԳԾԻ ՄԵԹՈԴ**- Բանավոր շրջանագծի մեթոդը համագործակցային վարժություն է : Երեխաները իրենց հանձնարարված թեմայի վերաբերյալ հերթականությամբ մտքեր են արտահայտում և աշխատում են անել այնպես որ մեկը մյուսին տրամաբանորեն շարունակի,որտեղ նրանց մեծապես օգնում է դաստիարակը: Օրինակ մարտի 8-ի մասին ասում են,որ դա մայրիկների,տատիկների տոնն է , դա զարնանային տոն է այդ օրը պետք է բացիկներ տալ մայրիկներին և տատիկներին, և այդպես շարունակ:

**Մանկապարտեզում կերպարվեստի հիմնական տեսակներն են՝**

**Պատկերում բնօրինակից** -Գծանկարից և գունանկարից տարբեր առարկաների պատկերում: Առարկաների պատկերում (ավարտված) ճեպանկար, բնօրինակից, երևակայությամբ և հիշողությամբ, եթե առարկան հնարավոր չէ գննել: Բնօրինակից, հիշողությամբ և պատկերացմամբ ծառերի, թռչունների, կենդանիների ուրվապատկերը (նկարչական նյութը՝ ջրաներկ, գուաշ, գունամատիտ, մոմակալիճներ, սպիտակ կամ երանգավոր թղթի վրա) առանց նախօրոք մատիտով արված նկարի: Բնօրինակից և հիշողությամբ կենդանիների, թռչունների և մարդու ֆիգուրայի պատկերման (ներառյալ ճեպանկարում)

կարողության զարգացում: Վառ արտահայտված ռեֆլեքսներով տաք և սառը գունային գամմայով նատյուրմորտների, աշնանային և գարնանային ծաղիկների պատկերում: Աշնանային և գարնանային բնության էտյուդային պատկերում (պլեներ) կամ պատկերում հիշողությամբ: Բնօրինակից, հիշողությամբ և պատկերացմամբ կենցաղային տարբեր իրերի՝ մրգերի, բանջարեղենի, ծաղիկների պատկերում (ներառյալ ճեպանկարում): Տարբեր գույների երկու ծալքավոր կտորների ֆոնին 2–3 առարկաներից կազմված նատյուրմորտի բնօրինակից պատկերում: Նկարչություն բնության գրկում (պլեներ) բնության տեսարաններ, շինություններ, կենդանիներ:

**2.Թեմատիկ պատկերում** -Շրջակա միջավայր: Գրական ստեղծագործության ձևավորում կամ պատկերագրողում: Թեմատիկ նկարչությունը պետք է իրականացվի դիտման, պատկերացման, հիշողության և հեքիաթների ձևավորման միջոցով: Կոմպոզիցիա՝ հասկացության լայն ըմբռնում: Իրականության, բնության որոշ երևույթների, կենցաղային սյուժեներ

ա) «Գեղեցիկ ձմեռ», «Ամանոր», «Գարուն», «Տոնական հրավառություն», «Հեքիաթի ամրոցը», «Կիզիչ օր», «Կրկեսում», «Ինչպես կօգնեմ մայրիկիս», «Առաջին ձյունը» «Ծիածան», «Ուշ աշուն», «Կենդանաբանական այգում», «Ճանապարհորդություն օդապարիկով», «Տոնական փաթեթավորում», «Տոնածառի խաղալիքներ», «Հայրենի երկրամասի գեղեցկությունը», «Զբոսանք այգում», «Մայրամուտ», «Թավուտ անտառում», «Բերքահավաք», «Իմ ծնողների դիմանկարները», «Զմեռային ձնակույտեր», «Հեքիաթային անտառում», «Խատուտիկները դաշտում», «Անտառի բացատ», «Երեկոյան քաղաքը», «Իմ սիրելի կենդանին», «Փողոցն իմ պատուհանից», «Իմ Հայաստան», «Զունգլիներում», «Լեռներում», «Անապատ», «Աշնանային շուկա», «Մենք նկարում ենք երաժշտություն», «Հրավառություն», «Բերքահավաք», «Մարգարտախիճում», «Ծառատունկ», «Բաբելոնյան աշտարակ»: «Մենք նկարում ենք տարվա եղանակներ», «Իմ սիրած խաղալիքները», «Խաղալիքները պարում են», «Գարնանը բակում», «Իմ ընտանիքը», «Իմ մայրիկը», «Կենդանաբանական այգում», «Անձրևոտ օր», «Թող միշտ լինի արևը»:

բ) Ձեռքը գրելուն նախապատրաստելու շրջանում առաջարկվող առաջադրանքների օրինակներ, «Տոնավաճառ», «Հագուստ աշնան համար», «Ժողովրդական վարպետի արհեստանոցում»,

գ) Հեքիաթների նկարագարդումներ. «Սևուկ ուլիկը», «Ծիտը», «Գայլն ու գառը», «Սուտլիկ որսկանը», «Պոչատ աղվեսը», «Շունն ու կատուն», «Հեքիաթ տաք և սառը գույների մասին»:

դ) Խմբային աշխատանքների համար նախատեսված թեմաներ (երբեմն ուսուցչի օգնությամբ) «Տոնահանդես», «Տիկնիկի սբրոց»:

**3. Պարկերում հիշողությամբ** - Պատկերման ընդհանրացված բնույթը: Զարգացնում է դեկորատիվ կոմպոզիցիայի հիմնական օրինաչափությունները՝ համաչափություն, անհամափաշություն (սիմետրիա, ասիմետրիա):

- նախշերի կատարում
- կիրառական արվեստի նմուշների պատկերագրում:
- շնորհավորական բացիկների պատրաստում և ձևավորում:
- պատի թերթերի և վահանակների պատրաստում:
- գրքի ձևավորում:

**4. Պատկերում կրկնօրինակմամբ** - Նախշեր և դեկորատիվ նախշերի պատկերումը օրինակների օգնությամբ: Աշխատանք ուղղանկյան, շրջանագծի մեջ՝ բուսական և երկրաչափական դեկորատիվ տարրերով: Առարկաների, բույսերի և կենդանիների ձևի ոճավորում և ընդհանրացում, ազգային զարդանկարչության առանձնահատկությունների, հագուստի, ափսենների և խաղալիքների ձևավորում: Արտահայտչական միջոցներ՝ կետ, գիծ, ֆակտուրա, տեքստուրա, գույն, ձև, ծավալ, համաչափություններ, զանգված և տարածություն: Կոմպոզիցիայի հիմունքներ (սիմետրիա, ասիմետրիա, հավասարակշռություն, ռիթմ և շարժում): Հակադրություն և ներդաշնակություն:

**5. Ազատ ստեղծագործական պատկերում** - Կավով կամ ծեփանյութով կատարվող աշխատանք: Կավը կամ պլաստիլինը՝ որպես գեղարվեստական նյութ, գործիքների ու

հարմարանքների անվանումները, ծեփակերտման աշխատանքների զարգացման մասին (ապակի, տախտակ, ջրաման, լաթեր, դրոշմներ) տեղեկություններ: Ժողովրդական վարպետների (բրուտների, խաղալիքագործների) աշխատանքները: Ծեփակերտում՝ ժողովրդական խաղալիք: Ամանեղենի ծեփակերտման տարբեր եղանակներ: Բրուտագործական առարկաների դեկորի պարզագույն հնարներ: Ծեփակերտում /կավից կամ պլաստիլինից/ բնօրինակից, հիշողությամբ, պատկերացմամբ՝ քաղաքային տրանսպորտ, ընտանի և վայրի կենդանիներ:

## Հեղինակների մեջբերումներ

<< Բոլոր նկարիչներն էլ նկարիչներ են, խնդիրն այն է, թե ինչպես պետք է մնալ նկարիչ, երբ դու մեծանում ես >> .

( Պաբլո պիկասսո )

Նկարչությունը միջնորդ է առարկայի կամ երևույթի և մտքի միջև:

( Սեմյուել Քոլերիջ )

Գեղեցկությունը ոչ թե այն է, ինչ նկատում է նկարվածը, այլ նկարիչը զգում է իր տեսածը պատկերացնելու անհրաժեշտության մեջ: Հենց այս անհրաժեշտությունն առաջացնում է ուժը, որն անհաժեշտ է առաջադրանքը կատարելու համար:

( Դեպի Կոլեկ )

Նկարչությունն ունակ է կազմել՝ առանց տեսնելու իրականությունը:

( Ռոլանդ Բարթ )

## Գլուխ Առաջին

Ճշտելով, ձևավորելով և ամրակայելով աշնան վերաբերյալ երեխաների գիտելիքները, կազմակերպեցի դիտումներ, բազմաթիվ պարապմունքներ և շեշտը դրեցի տարվա այս եղանակի ամենակարևոր առանձնահատկության՝ տերևաթափի գեղեցկության վրա :

Զբոսանքի ժամին բախում հավաքեցինք տարբեր գույների տերևներ, խնամքով չորացրեցինք, որպեսզի օգտագործենք ապլիկացիայի ժամանակ:

Այս պարապմունքի միջոցով յուրաքանչյուր երեխա կարող է ներկայացնել տերևաթափի հրաշքը իր պատկերացմամբ և ընկալմամբ:

## Օրինակելի Պարապմունք

**Տեսակը՝** թեմատիկ ապլիկացիա

**Թեմա՝** Տերևաթափ

**Նպատակը՝** Հետաքրքրություն առաջացնել ապլիկացիայի հանդեպ: Սովորեցնել չորացած տերևները առանց վնասել և զգուշորեն փակցնել ինքնակաշունին: Շարունակել ծանոթացնել տաք գույներին: Զարգացնել ձևի, գույնի, կոմպոզիցիայի զգացողություն : Սովորեցնել նկատել և գնահատել բնության գեղեցիկ երևույթը: Կարողանալ դրսևորել ինքնուրույնություն տերևները տեղադրելիս, օգտվել տարբեր գույներից: Համեմատել սեփական աշխատանքն ընկերջ աշխատանքի հետ, գտնել նմանություններն ու տարբերությունները: Զարգացնել երեխաների գեղագիտական ընկալումը: Կարողանալ հաճույք ստանալ սեփական աշխատանքից :

**Անհրաժեշտ պարագաներ՝** A4 չափսի թղթից պատրաստված շրջանակ ինքնակաշունով, շականակագույն թուղթ, նախապես չորացված տերևներ, մկրատ և մեծ ցանկություն:

**Պարապմունքի ընթացքը՝**

Ընթերցել Աթ. Խնկոյանի << Անտերև ծառը >> բանաստեղծությունը .

### Անտերև ծառը

Փչեց ցուրտ քամին,

Եկավ մեզ,մշուշ

Թերթերը թափեց

Ծաղիկը քնքուշ

Անտերև ծառը

Ճյուղերը ճոճեց,

Աշնան քամու հետ

Կանգնեց ու վիճեց

.  
-Ինչու՞ տերևներս  
Մեկ-մեկ պոկեցիր  
Ու աչքիս առաջ  
Գետին Թափեցիր

Վերցնել նախապես չորացրած տերևները և զգուշորեն փակցնել ինքնակաշունով շրջանակի վրա, ինչը նախատեսված էր կոմպոզիցիան ստեղծելու համար: Երեխաներին առաջարկել միասին ստեղծել աշնանային պատկեր այն մասին, թե ինչպես են դեղին, կարմիր, նարնջագույն, դարչնագույն տերևներ աշնան քամուց պոկվում ծառերի ճյուղերից և պարելով թափվում են ցած: Երեխաները հավաքվում են իրենց աշխատանքի շուրջ և զգուշորեն սկսում աշխատել:

Վերջում հիանալ սեփական և ընկերների աշխատանքներով:

### Դիտարկող՝

**Տնօրեն**-Դաստիարակը հասավ իր նպատակին, երեխաները: Երեխաները կարողանում են ինքնուրույն աշխատել:

**Մեթոդիստ**- Երեխաների ստեղծագործական միտքը զարգացնող հաճելի և զվարճալի պարապմունք էր:





## Եզրակացություն

Աշխատանքի փորձը վկայում է, որ ոչ սովորական նյութերով և յուրօրինակ տեխնիկական միջոցներով աշխատելը թույլ է տալիս երեխաներին վերապրել անմոռանալի դրական զգացումներ: Ինչպես նաև հիանում են մեկը մյուսի աշխատանքով:  
Ծնողական սեմինարների ժամանակ ծնողներին նյութեր, մտահաղացումներ առաջարկել, որպեսզի տանը հանգստյան օրերին երեխաների հետ աշխատեն նշված մեթոդներով:

## Գրականության ցանկ

1. Լ. Սմբատյան

Լ. Սարգսյան

<<Կերպարվեստի պարապմունքների կազմակերպումը մանկապարտեզների միջին խմբում >>:

2. Հ. Մխիտյան

Լ. Սմբատյան

<< Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր >>

3. Լ. Մանուկյան և ուրիշներ

<< Մանկական ստեղծագործությունների ընտրանի >>

4. Հ. Մխիտյան

Լ. Սմբատյան

Լ. Սարգսյան

<< Խոսքի զարգացման պարապմունքները միջին խմբում >>